

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ

V դարի վերջերին ստեղծագործած Ղազար Փարպեցու գրչին են պատկանում «Պատմութիւն Հայոց» և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» աշխատությունները, որոնց տարբեր առիթներով անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ: Իսկ ամեն մի ուսումնասիրություն պահանջում է սկզբնաղբյուրի հավաստիություն: Բայց, ցավոք, մեզ հայտնի ամենահին ձեռագրերը, այդ թվում Փարպեցու երկերինը, սկզբնաղբյուրի համեմատ շատ ավելի ուշ շրջանի են պատկանում, ուստիև, թեկուզ ականայից, կարող էին ենթարկված լինել հետագա լուրջ աղավաղումների: Առավել ևս, Փարպեցու երկու գործերն էլ պարունակող ամենահին ձեռագիրը¹, որ հայտնի է այսօրվա բանասիրությանը, ընդօրինակված է ընդհուպ 1672թ.: Իսկ ավելի ուշ ավանդվածների համար, ինչպես համեմատությունից եզրակացնում են գիտական բնագիրը կազմողները, սկզբնաղբյուր է ծառայել նշյալը²: Եթե անմիջականորեն մեկնելուց արտագրված ձեռագրերում նկատվում են բառային, հնչյունական և քերականական բազում տարբերություններ (իսկ այդպիսի փաստեր բերվում են հենց քննական բնագրում՝ տողատակին), ապա «ՊԺվար է պատկերացնել՝ V դարի երկը մինչև 1672 թ. ձեռագրին հասնելը քանի տասնյակ ընդօրինակություններ է ունեցել և ինչպիսի այլափոխություններով, աղավաղումներով ու «խմբագրում-սրբագրություններով» հասել մեզ: Ընդօրինակությունների միջոցին առաջացած ականա վրիպումներն իսկ բավական էին, որպեսզի այսօրվա բանասիրությունը նախնական բնագիրը վերականգնելու մտահոգությունն ունենար»³: Տարբերակների գոյության փաստն արդեն իսկ կասկած է հարուցում եզրերից մեկի՝ հետագայի միջամտության արդյունք լինելու վերաբերյալ: Թեև անուրանալի է նաև համատեղ գործածության հնարավորությունը, և հատկապես այն դեպքում, երբ նշյալների միջև գոյություն ունի նրբիմաստային-ոճական տարբերություն կամ էլ մեկը հարազատ է հեղինակի

¹ Ձեռագրերի մասին տե՛ս Գ. Տեր-Մկրտչեան, Ղազար Փարպեցու ձեռագրերը, «Արարատ», 1901:

² «Յառաջաբան» գիտական հրատարակության, Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան (աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մայիսսեան), Տփղիս, 1904, էջ Ժ:

³ Պ. Մուրադյան, Կ. Յուզբաշյան, Ղազար Փարպեցու նորահայտ պատահիկը, Բանբեր Մատենադարանի, 1973, № 11, էջ 7-32:

խոսվածքին, այսինքն բարբառային արժեք ունի, ուստիև դրսևորվում է կենդանի խոսողության ընթացքում⁴։ Ոչ միայն հնչյունական, այլ նաև բառակազմական տարբերակների որոշ դրսևորումներում նույնպես նկատվում է գրքային և բարբառային արժեք ունեցող միավորների փոխառնություն։

Եղած մի քանի ձեռագրերի համեմատությամբ, ինչպես նաև որոշ ուսումնասիրողների արժեքավոր սրբագրությունների հիմամբ կազմված քննական բնագիրը բազում փաստեր է տրամադրում բառերի ինչպես հնչյունական, այնպես էլ բառակազմական տարբերակների։ Իհարկե, այս վերջիններն էլ հանգում են հնչյունական տարբերության, սակայն այս դեպքում հնչյունական տարբերությունը «ի հայտ է գալիս բառակազմության գործընթացում»⁵։

1. Ածանցային տարբերակներ։ Բայական համակարգում -ան- միջնածանցի առկայությամբ կամ բացակայությամբ գրաբարյան զուգահեռ ձևերից որոշ օրինակներ միատեղ գործածությամբ արտահայտվել են նաև ուսումնասիրվող նյութում։ Այդպիսիք են՝ ցանկամ-ցանկանամ⁶, փութամ-փութանամ. «ի գործ առաջիկայ երկնաւոր իրացն փութային»_«միշտ և հանապազ ի կէտ կոչման և տենչալի մարտիրոսութեանն փութանային հասանել»։

Վերջածանցման բնույթով առկայացած տարբերակներ ևս նկատվում են Փարպեցու գործածությամբ.

Երէն/արէն_«Նոքա...ներծաւորեալք ի յունարէն հեգենայինսն», «Ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս իրահանգի յունարէն ուսմանն»-«Որ է անդամ մարմին. անբեղուն ըստ բուսոյ և անհամ ըստ ճաշակոյ, յուներէն»։

Ոց/(ա)նոց-«Ի կրել արտաքս զաւելորդ թրքածս մոխրոցացն՝ ծանծրացուցանէ զգազախաղէն զկրողսն»_«Մտեալ ի տուն մոխրանոցին զկրակն ասաց գոլ աստուած»։

2. Հիմքակազմական տարբերակներ։ «Գրաբարի բառակազմությանը բնորոշ առանձնահատկություն է հիմքերի տարբերակայնությունը, այսինքն՝ հիմքակազմական զուգածությունների առկայությունը»⁷։ Իսկ տարբերակային են այն հիմքերը, «որոնք պահպանելով իրենց բառային և բառակազմական նշանակությունը, տարբեր բաղադրություններում, հաճախ նաև նույն բառերում, հանդես են գալիս տարբեր ձևավորմամբ»⁸։ Եսպես հնչյունական

⁴ Ինչպես նկատում է Վ. Առաքելյանը. «Փարպեցու ժողովրդախոսակցական բոլոր ձևերը առանձնապես հանդես են գալիս երկխոսությունների մեջ», Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Եր., 1981, էջ 208։

⁶ Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարը (V դար), Եր., 2006, էջ 242։

⁷ Օրինակները քաղված են Հայկական համաբարբառ-ից և ստուգված են քննական բնագրով։

⁸ Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 83։

⁹ Նույն տեղում։

տարբերությամբ, բայցև հիմքային առանձնահատկությամբ բնութագրվող զուգահեռ միավորներից Փարպեցու լեզվում գործառույն են.

Ներկայի հիմք/ ենթակայական դերբայով հիմք (զրո / ող). որոշութիւն-որոշողութիւն, ընտրութիւն-ընտրողութիւն, մտածութիւն-մտածողութիւն. «...ասել որոշողութեամբ զսաստիկ վարուցն նոցա ճգնութիւնս»_«համաժին անուշութիւնս մատուցանեն կերողացն զխորտկացն որոշութիւնս», «որոշմեաց... զխորամանկութեանն զմտածողութիւնն Անակայ»_«զինչպիսի հնարիւք և մտածութեամբ ելս իրացն կարասցեն գտանել»:

Հրամայականի հիմք-կատարյալի հիմք փոխհարաբերությամբ են տամ բայով զրսւորված սույն օրինակները՝ կենսատուր-կենսատու, հրամանատուութիւն-հրամանատուութիւն. «կնքեաց զկենսատուր քարոզութիւնս նովին Հոգւով»_«բերելով ընդ ինքեանս զնշան կենսատու խաչին», «ըստ Աստուծոյ հրամանատուութեանն»_«ըստ աստուածային հրամանատուութեան»: Սովորաբար բառավերջյան տու բաղադրիչը բնորոշվում է «տվող» իմաստով, ինչպես Փարպեցու վերոհիշյալ (կենսատու) և հետևյալ օրինակներում՝ խրատատու, պարզևատու, հրամանատու: Ինչ վերաբերում է տուր վերջնաբաղադրիչին, ապա այս մեկը հաճախ միանում է այնպիսի հիմքերի, որոնք և պայմանավորում են «նախատիպ հիմքի նշանակած առարկայի կողմից տրված» իմաստը, որի առումով Փարպեցին ունի աստուածատուր, Քրիստոսատուր: Ինչ խոսք, համաբանության սկզբունքով տուր-ը ձեռք է բերել իրացման այլ ոլորտ՝ նույնանալով տու-ին (կենսատու):

«Հետաքրքիր հիմքակազմական զուգաձևություն է ստեղծվում լի ածականով (որ նաև բայարմատ է) և լից. լիր բայահիմքերով»⁹: Լի և լից վերջնաբաղադրիչներով զուգաձևության դրսևորում է հետևյալը՝ ամենալի-ամենալից. «զգաւառն ամենալի»_«սեղանս ամենալիցս հոգևոր խորտկօք»: Հայ մատենագրությունում ավանդվել է նաև ամենալիր (ՆՀԲ¹⁰ - Ագաթ., Նար.), որի բաղադրությամբ է ամենալրութիւն, որ ըստ ՆՀԲ-ի միայն վկայություն է ստացել Փարպեցու կողմից: Ի դեպ նշենք, որ ամենալի բառն իր տեսակի մեջ լի վերջին բաղադրիչով միակ օրինակն է Փարպեցու գործածությամբ: Մինչդեռ լից-ով վերջավորվողները բավականին տարածված են և, ըստ երևույթին, շատերի առաջին վկայությունը Փարպեցու կողմից է, ինչպես՝ գորովալից, որսալից ևլն:

⁹ Լ. Հովսեփյան, Նշվ. աշխ., էջ 89:

¹⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի:

«Կան նաև հիմքերի կառուցվածքային զուգաձևություններ, որոնք մոտենում են հնչյունական տարբերակների տիպին»¹¹: Ուսումնասիրվող նյութում որպես այդպիսիք տեղ են գտել՝

ա/ Հատված և լրիվ հիմքերով զուգաձևություններ՝ արիուֆին-արուֆին.
«Են արք...իրս արիուֆեան լիք և կատարեալք»_«Գաբաղ միայն...մեծ արուֆին ցուցեալ խոցեցաւ», քանիօնութին-քանօնութին

բ/ «Որոշ դեպքերում զուգաձևություններ են առաջանում մաքուր հիմքի և արդեն «մեռած», բառակազմական գործունեությունը կորցրած ածանցներ կամ ածականներ ունեցող հիմքի հակադրությամբ, ընդ որում այդ մասնիկներն այլևս չեն գիտակցվում և տրոհելի են միայն պայմանականորեն»¹²: Այս առումով Լ. Հովսեփյանի ներկայացրած օրինակներում ընդգրկվել են՝ կենարար-կենդանարար, որ միաժամանակ ի հայտ են գալիս Փարպեցու Պատմությունում. «ապաւիճեալք...ի բան կենարար Փրկչին», «խառնուրդք խաղաղութեան եղեն ընդ միմեանս աւետաւոր յարութեամբ կենարարին»_«Չքեզ...և զսուրբ Հոգիդ կենդանարար...խոստովանիմք արարիչ երկնի և երկրի», «Գոհանամք զքէն, Զրիստոս, որ բազում անգամ կենդանարար գառնդ...բաշխեցար ի ձեռաց մերոց»: Պետք է արձանագրել, որ բերված երկրորդ օրինակի երկու վկայություններն էլ դրսևորված են աղոթքներում, ասել է թե հեղինակը հավատարիմ է մնացել ավանդաբար փոխանցվածին, մինչդեռ ազատ շարադրանքում կիրառել է նախորդը. մի իրողություն, որ փաստելի է նաև այստեղ չներկայացված այլ վկայություններով:

Գրաբարում բառակազմական հիմքեր են երկար-ը և երկայն-ը, որոնք ծագումնաբանորեն հնդեվրոպական երկ արմատից համապատասխանաբար ար և այն մասնիկներով կազմություններ են: Առաջինը, ի տարբերություն երկրորդի, հայտնի է նաև յ նախահավելվածով՝ յերկար, որը 15 վկայություն ունի Փարպեցու մոտ՝ ի հակակշիռ միայն մեկ անգամ առանց յ-ի գործածվածի: Բառակազմությանը վերջիններս մասնակցել են որպես ազատ տարբերակներ: Ասելիքը հաստատվում է թե՛ ՆԴԲ-ի տվյալներով և թե՛ Փարպեցու վկայություններով. երկարեմ-յերկարեմ. «ընդ որս դուք զբանս երկարեալ խօսիք»_«մի յերկարեալ խօսիք ընդ մեզ բանս», այսպես՝ երկարագոյն, յերկարահամբեր, յերկարայուշ ևլն: Ըստ երևույթին, Փարպեցու հիշյալ բնույթի օրինակները գերազանցապես յ-ով են (բոլորը միասին 28), մինչդեռ առանց յ-ի են միայն հիշատակված երեք բառերը: Դիտարկվածից զատ պետք է արձանագրել այն փաստը, որ երկայն բառատարբերակի և

¹¹ Նշվ. աշխ., էջ 89:

¹² Նույն տեղում:

սրանով բաղադրված կազմությունների որոշ օրինակներ ևս առկա են ուսումնասիրվող նյութում: Այսպես՝ երկայն, երկայնեմ, երկայնագոյն, երկայնամիտ, երկայնամտութիւն (կա նաև առանց հոդակապի), երկայնաչափութիւն: Այսուհանդերձ, Փարպեցու լեզվում որպես բառային զուգահեռ միավորներ գործում են հետևյալները՝ երկար /յերկար/-երկայն, երկարեմ/յերկարեմ/-երկայնեմ. «Եւ նա ժամավաճառ բանիք երկայնէր զասացեալսն իւր», երկարագոյն -երկայնագոյն. «Երթայր ընդ նոսա երկարագոյնս»_«Որք զօրինադրեալ ժամս գիշերոյն կարծէին երկայնագոյն քան զայլ գիշերացն»: Թե՛ մեկ և թե՛ մյուս տարբերակով բոլոր վկայությունները Փարպեցու մոտ մի ընդհանուր իմաստից (ժամանակ, տևողություն) բխող տարբեր իրացումներ են: Ինչ խոսք, ԵՅԲ-ում ամրագրված մատենագրական տվյալներից հնարավոր է եզրակացնել երկայն-ի նախապես «տարածական» իմաստով գործածություն: Բայց որ այն նաև ժամանակային իմաստով է դրսևորվել, նույնպես հաստատվում է եղած փաստերով: «Առկա նյութը թույլ չի տալիս անվերապահորեն պնդելու, թե երկայն-ը տարածական, իսկ երկար-ը ժամանակային իմաստով է կիրառվել: Համեմայնդեպս V դարի կտրվածքով այդ տարբերակումը արդեն չկա, եթե վկայված օրինակները հարազատ են նախահիմք ձեռագրին: Բայց քանի որ երկար-ի ժամանակային իմաստով կիրառությունը ավելի զգալի է, կարելի է ենթադրել, որ նախագրային շրջանում... տարբերակված են եղել ըստ ժամանակային և տարածական հատկանիշների»¹³: Նախնական տարբերակվածության օգտին է նաև այն փաստը, որ երկայն տարբերակը հայտնի չէ յ նախահավելվածով(ԵՅԲ), մինչդեռ մյուսի ժամանակային մակբայի կարգավիճակը թելադրել է նաև նախդրային յ-ի հավելումը:

Հիմքային տարբերակները առաջանում են նաև տարբեր հոլովածներից կազմված բաղադրություններում: Այս տեսակետից Փարպեցին շատ անգամ գործածված **այրևծի/այրուծի** օրինակների հետ միայն մեկ վկայությամբ ունի **առնևծի**: Ուշադրության արժանի է այն, որ վերջինը սեռական հոլովով է «տես... և սաստկութիւն **առնևծիոյ**»: Սակայն սա չի նշանակում, թե մյուս եզրը ուղիղ ձևով է, ընդհակառակը, հիմնական մասով թեք հոլովներով է նաև մյուսը. «ժողովրդ առ ինքն... զնախարարս և զազատս և զամենայն **այրևծիոյ**» ևլն: Բնականաբար, առաջինի ուղիղ ձևով (առնևծի) օրինակ չհայտնաբերվելու պատճառով է, որ ԵՅԲ-ի հեղինակների կողմից տրվել է **այրևծի/այրուծի/** զխաբառի տակ՝ որպես սեռական հոլովի մեկ այլ դրսևորում, չնայած որ Կ. Առաքելյանի կարծիքով «պետք է գրվեր **առն և ծիոյ**»¹⁴

3. Հոդակապով և առանց հոդակապի, տարբեր հոդակապերով առկայացող

¹³ Լ. Հովհաննիսյան, Գշվ. աշխ., էջ 252-253:

տարբերակներ: Բառի հոդակապով և առանց հոդակապի զուգահեռ գործածությունը Փարպեցու երկերում ներկայանում է հետևյալ օրինակներով՝ արդարամտութիւն-արդարմտութիւն, երկայնամտութիւն-երկայնմտութիւն, խոհակերութիւն-խոհկերութիւն, նախագոյն-նախգոյն, վատատոհմակ-վատտոհմակ: Ըստ երևույթին, հիշյալ անհոդակապ բառերին նույնակերպ մի քանի օրինակներ հագիվ կախող ենք ավելացնել Փարպեցու բառապաշարից: Այլապես ընդհանուր առմամբ գործ ունենք հոդակապով դրսևորումների հետ, որոնցից որոշ քանակությամբ օրինակներ առանց հոդակապի կան այլ հեղինակների մոտ, ինչպես վկայում է ՆՅԲ-ն: Իսկ հակառակ տեսակետից միայն չարկամ բառն է, որ չարակամ ծնով է այլ գործերում (Եզնիկ, ՍԳր ԼԷ) :

Ե և է ծայնավորների արտասանական ընդհանրությունը, որ գոյացել էր արդեն V դարի երկրորդ կեսից¹⁵, պայմանավորել է նաև ի+ա միաձուլլ հոդակապի դերում միաժամանակ հանդես գալը: Այսպիսի զուգահեռները չայն սահմաններ են ընդգրկում Փարպեցու մոտ: Օր.՝ ոսկեգիր-ոսկեգիր, հոգեշնորհ-հոգեշնորհ ԼԷն:

Յոդակապի դեր կատարող և, ու շաղկապներով են հանդես գալիս հետևյալները՝ այրևծի-այրուծի:

Յետաքրքրություն է առաջացնում նաև՝ բանակատեղ-բանակետեղ. «առեզերքն Ղեկովք գետոյ արարեալ զիւր զօրու բանակատեղս»_«զայն տեղօք արարեալ բանակետեղս արանց՝ դադարեին անդ զաւուրս տօթոյն»: Վերջինս եթե տարածված (ըստ ՆՅԲ-ի՝ Եփր., Վեցօր. ԼԷն) բանակետղ-ի սխալագրչությունը չէ, ապա հավանական է, որ այս մեկի անալոգիայով է նման կերպարանք ստացել:

4. Բարդ բառերի բաղադրիչների շարադասական տարբերակներ

Այսպիսի տարբերակների հիմքում ընկած է բաղադրիչների հակառակ շարադասությունը: Եդ. Աղայանը սրանք անվանում է փոխատեղական բաղադրյալ տարբերակներ¹⁶: Փարպեցու բառապաշարում տեղ են գտել՝ լիապտուղ-պտղալից. «տեսանիր բարձր զծիթենին լիապտուղ»_«իսկ երևումն քեզ սքանչալտեսիլ ծիթենւոյն...բարձր և վարսաւոր բազմաբեր պտղալից», «զբագունս ծաւալեալ անդաստանս ցուցանեն ծաղկալիցս և պտղալիցս և պտղաբերս», զհւղաքաղաք-քաղաքագետղ. «ի զհւղաքաղաքին... բանակէր այն օր»_«մերձեալք ի քաղաքագետղն, որ կոչի Առեստ»: Վերջիններիս շարքը կարելի է դասել նաև ազատ շարադասությամբ հանդես եկող

¹⁴ Վ. Առաքելյան, Ակնարկներ..., 80 էջի տողատակի ծանոթագրությունում:

¹⁵ Եդ. Աղայան, Գրաբարի քերականություն, Եր., 1964, էջ 138:

¹⁶ Եդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 149:

դարձվածքները, հարադրավոր բայերը, ինչպես. «ձեռն ի գործ արկաներ երանելին Մաշտոց»_«բռնադատեաց... զձեռն արկանել ի գործ»: Այսպիսի օրինակները չափազանց շատ են Փարպեցու գործերում:

5. Առանձին և կից բաղադրիչներով առկայացող զուգածներ

Հիշյալ իրողության լավագույն դրսևորումներից է բայի՝ հարադրավոր և կից բաղադրիչներով տարբերակների առկայությունը: Այսպիսիք են քննվող նյութում առկա հետևյալ օրինակները՝ **ձեռն արկանեմ-ձեռնարկեմ**. «յոր գործ և ձեռն արկաներ գործել՝ Տեր յաջողեր ի ձեռս նորա»_«որպիսի ինչ զմտաւ ածեալ զայդպիսի իրս վնասից իշխեցեր ձեռնարկել», **երկիր պազանեմ-երկրպագեմ**. «երկիր պազանեին միայնոյ ճշմարտին Աստուծոյ»_«երկրպագեալ միոյն միայնոյ ճշմարտին Աստուծոյ...կատարեցին զաղօթսն», «շնորհակալութեամբ գոհանայր երկրպագելով», **ուշ դնեմ-ուշադրեմ** «զմայր զօրավարն Զայոց...ուշ եղեալ երթալ դադարել...յամուր տեղիս սահմանացն հաղտեաց»_«ուշադրելով զամենայն օր...մասին նշխարաց սրբոցն ի կատարումն նոցա լինել արժանի», «լռեալք ի հարցանելոյ սուրբքն՝ ճանապարհին ուշադրեին»:

* * *

Գիտական բնագրով հաստատված բառակազմական տարբերակները ներկայացնելուց զատ հարկ ենք համարում նաև նկատի առնել ներքոհիշյալ մի քանի փաստերը.

Մայր ձեռագրի (1672թ.) անընդդիմակաց բառը քննական բնագրում ուղղել են **անընդդիմակայ** (էջ 126, տողատակին տրված են ձեռագրերի և նախորդ տպագրությունների ընթերցումները)՝ հավանաբար նկատի ունենալով այսկերպ երեք վկայությունները: Մինչդեռ V դարից կան ավանդված երկու հիմքերով էլ, ինչպես նաև նույն բաղադրիչին կցված զուգածություններ¹⁷: Նույնկերպ, ի հաշիվ թվով շատ հողակապով տարբերակի, սրբագրել են հետևյալները՝ շահստան/89/, խրատտու/120/: Մեկ օրինակ այսպես, մեկ օրինակ էլ այնպես եղածներից անհողակապ են դարձրել՝ աղբատասիրութիւն/70/, ձեռնահաս/172/, իսկ հողակապով՝ քաղցրբանութիւն/157/: Ուշագրավ է նաև, որ միայն մեկ վկայությամբ **նուազպտուղ**-ը ուղղել են **նուազապտուղ/29/**: Նույն սկզբունքին համաձայն, իհարկե, կարող ենք ուրիշ շատ «ուղղումներ» կատարել, այսպիսով նաև բացառել ինչպես վերոհիշյալ, այնպես էլ այլ բնույթի մի շարք զուգածությունների գոյությունը: Բայցև այսպիսի ուղղումները կարող են շատ դեպքերում հանգեցնել

¹⁷ Տե՛ս Լ. Գովսեփյան, նշվ. աշխ., էջ 88: Նույնպես Լ. Գովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 249:

սխալների: Օրինակ, չենք կարող միանշանակ պնդել, թե եթե տվյալ տարբերակը ձեռագրում համեմատաբար շատ վկայություններ ունի, քան մյուսը, ապա այն նախնականն է: Նույնիսկ շատ հնարավոր է, որ մյուսը ենթարկված լինի հետագա փոփոխությունների: Բացի այդ, ինչպես վերը արդեն նշել ենք, մի շարք դեպքերում արդարանում է տարբերակների՝ նույն աշխատության սահմաններում գործածությունը: Մատենագիտության առկա փաստական տվյալներին համաձայն ինչ-ինչ սրբագրություններով մեզ մատուցած գիտական բնագիրը, բնականաբար, հրատարակիչները չէին էլ կարող վերջնական համարել. «ընթերցողին մնում է հաւատալ մեր հաւաստիացմանը, մինչև որ լոյս տեսնի Փարպեցու մի նոր քննադատական հրատարակութիւն»¹⁸: Իսկ բանասիրական ձգտումները ուղղված են նորանոր փաստերի հայտնաբերմանը, որոնց համաձայն էլ պետք է վերականգնել և հնարավորինս նախնական տեսքի բերել այս կամ այն ձեռագիրը: Այս առումով և մեր ուսումնասիրության նյութի տեսակետից ուշագրավ է այն փաստը, որ Նորայր Պողարյանի հայտնաբերած պատառիկում (1419թ.) գիտական բնագրի պատասխանատուութիւն օրինակի փոխարեն պատասխանատուութիւն է¹⁹: Ի դեպ, -տրութիւն կազմությամբ դրսևորումները առավել հատուկ են հետմետրոպայան շրջանի գործերին²⁰: Այս և նկատվելիք այլ իրողությունները, որոնց սկզբնական լինելու հավանականությունը ավելի մեծ է, պետք է ներառել հետագա հրատարակությունների համար: Իհարկե, ավելորդ չենք համարի մեջ բերել նաև Փարպեցու երկերի քննական հրատարակության առումով Ն. Բյուզանդացու հետևյալ դիտողությունը. «կատարեալ ուսումնասիրութիւնն կարող էր սրբագրել զայնոսիկ 400 անգամ, միտ դնելով մատենագրին լեզուին յատկութեանց և պատմութեան ընթացքին»²¹:

¹⁸ «Յառաջաբան» գիտական հրատարակության, էջ 5:

¹⁹ Ն. Եպս. Պողարյան, Նորագյուտ հատված Ղ. Փարպեցու «Հայոց Պատմութեան», Բանբեր Մատենադարանի, № 8, 1967, էջ 273:

²⁰ Այս առնչությամբ տե՛ս Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 103:

²¹ Ն. Բյուզանդացի, Զննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ազաթանգեղոսի և Ղազարայ Փարպեցու, Յուշարձան, 1911, էջ 173: